Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-514[2]-08.05.2014,18.09.2014-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասից եւ 6-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «փախստականի կարգավիճակ կամ քաղաքական» բառերը:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի վերջին պարբերությունը եւ 19-րդ հոդվածի «գ» կետի վերջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«-իրականացնել մարդու թրաֆիքինգ կամ շահագործում, պետական սահմանի ապօրինի հատում կամ անօրինական միգրացիայի կազմակերպում:»:

Հոդված 3. 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ «է» կետով.

«է) օրենքով սահմանված այլ դեպքերը:»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ «ժգ» կետով.

«ժգ) օրենքով սահմանված կարգով զոհի կամ հատուկ կատեգորիայի զոհի կարգավիճակ ունեցող անձինք եւ հատուկ կատեգորիայի զոհի օրինական ներկայացուցիչը:»:

Հոդված 5. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պարտավորությունը չի տարածվում այն օտարերկրացու նկատմամբ, ով օրենքով նախատեսված կարգով գտնվում է մտորման ժամկետում:»:

Հոդված 6. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Հ/Հ	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը	Առաջարկությունը	Եզրակացությունը
1.	2.	3.	4.	5.
1.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Էլինար Վարդանյան**		Առաջարկվում է նախագծերի փաթեթը լրացնել նոր՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, որով կնախատեսվի անվճար իրավաբանական օգնություն տրամադրել նաև օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ և հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց:	**Առաջարկությունն ընդունվել է:** Նախագծերի փաթեթը լրացվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով: